Մոտեցեք մարդկանց,
Սովորեք նրանցից,
Սիրեք նրանց,
Սկսեք նրանից, ինչ նրանք ունեն,
Կառուցեք նրանց ունեցածի վրա:
Բայց լավագույն առաջնորդները նա է,
Որ երբ իր խնդիրը լուծված է,
Իր գործն՝ արված,
Մարդիկ կասեն.
՝Մենք ինքներս արեցինք՝:

2000-ամյա չինական բանաստեղծություն
Լաո Ցու

Մարդիկ կհարգեն ձեզ, երբ դուք լինեք պարզապես այնպիսին, ինչպիսին կաք եւ բավարարվեք դրանով, եւ ոչ թե համեմատվեք կամ մրցակցեք:

Լաո Ցու

Լավ կառավարվող երկրում աղքատությունն է ամոթալի, վատ կառավարվող երկրում՝ հարստությունը:

Կոնֆուցիուս

Պետության ուժը գալիս է ընտանիքի ամբողջականությունից:

Կոնֆուցիուս

Ճաքճքած ադամանդն ավելի գերադասելի է , քան հարթ խճաքարը:

Կոնֆուցիուս

Ընտրեք ձեր սիրած գործը եւ ձեր ողջ կյանքում երբեք ստիպված չեք լինի աշխատել:

Կոնֆուցիուս

Ուր էլ որ գնաք, սրտով գնացեք:

Կոնֆուցիուս

8-րդ

Գերագուն բարիքը ջրի նման է,
որը միամիտ (անշահախնդիր) սնում է ամեն ինչ
Գոհ է այն խոնարհ (բացառիկ) տեղերում, որոնք ուրիշները արհամարհում են,
Ուրեմն, Դաո-ի (Ճանապարհի) նման է:

Ապրելիս, ապրեք գետնին մոտ:
Խորհելիս, պարզ եղեք:
Պայքարելիս արդար եւ մեծահոգի եղեք:
Կառավարելիս մի ճնշեք:
Աշխատելիս, սրտով գործ արեք:
Ընտանիքի մեջ, լրիվ նվիրված եղեք:

Մարդիկ կհարգեն ձեզ, երբ դուք լինեք պարզապես այնպիսին,
ինչպիսին կաք եւ բավարարվեք դրանով, եւ ոչ թե համեմատվեք կամ
մրցակցեք:

66-րդ

Բոլոր առուները լցվում են ծովը,
քանզի ծովը դրանցից ցածր է:
Նրա հզորությունը բխում է իր խոնարհությունից:

Եթեձգտում ես ժողովրդին կառավարել,
պիտի խոնարհվես իր առաջ:
Եթե ձգտում ես նրան առաջնորդել
պիտի սովորես նրան հետեւել:

Վարպետը ժողովրդից բարձր է,
սակայն ոչ ոք դրանից չի ճնշվում:
Նա ժողովրդից առաջ է ընկնում
սակայն ոչ ոք դրանից չի նեղվում:
Բոլորն էլ երախտապարտ են նրան,
քանզի նա ոչ մեկի հետ չի մրցակցում,
ոչ ոք չի կարող նրա հետ մրցել:

75-րդ

Երբ հարկերը շատ ծանր լինեն,
ժողովուրդը սոված կմնա:
Երբ պետությունը շատ միջամտի ժողովրդի կյանքին,
Ժողովուրդն իր ոգին կկորցնի:

Աշխատեք մարդկանց օգտին,
Վստահեք եւ հանգիստ թողեք նրանց:

Տաո Տե Ճինգ Լաո Ծը